



## ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

### ՀԱՅՈՑ ՊԱՏԱՐԱԳԸ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԹԱՇՉՅԱՆԻ ԳՐԱՌՄԱՄԲ

Հայոց Պատարագը, որի անմիշական պայմանության տակ կազմակերպվել է Գրիգորյան Խորալը՝ կաթոլիկական ժամերգության, և դրանով իսկ վաղ միջնադարյան Եվրոպայի ողջ մասնագիտացված երաժշտության հիմքը<sup>1</sup>, հանդիսանում է երաժշտական արվեստի համամարդկային գանձարանի կարևորագույն արժեքներից մեկը: Լինելով պաշտամունքային երաժշտության արտահայտություն, Պատարագը, շնորհիվ իր գեղարվեստական բարձր արժանիքների, կիրառական նշանակության հետ միասին ունի նաև գեղագիտական մեծ արժեք, ինչպես հայոց միջնադարի պաշտամունքային կառուցները կամ մանրանկարչության և եկեղեցական գրականության ստեղծագործությունները: Միաժամանակ Պատարագը գիտական հետազոտության անսպառ նյութ է բովանդակում: Ստեղծվել են Պատարագին նվիրված մի շարք աշխատություններ, այդ թվում և երաժշտագիտական<sup>2</sup>: Սակայն առ այսօր վերջինիս երաժշտական բովանդակությունը մանրամասնորեն չի ուսումնափրկված: Սույն հոդվածում մենք կփորձենք քննության առնել Պատարագի երաժշտական հորինվածքը, լադային կառուցվածքը, մեղեդիական ոճը և այլ բաղադրամասերը:

Պատարագը (Литургия, месса, обедня), ինչպես հայտնի է, քրիստոնեական եկեղեցու ամենահանդիսավոր ծեսն է, սուրբ հաղորդության արարողությունը, որը նվիրված է Քրիստոսի և նրա աշակերտների խորհրդավոր ընթրիքի հիշատակին: Դրա հետ մեկտեղ Պատարագ է կոչվում նաև նշված ծեսին ուղղեցող հոգևոր երգերի շարքը<sup>3</sup>: Տվյալ իմաստով Հայոց Պատարագը քրիստոնեական Արևելքի մասնագիտացված գրավոր երաժշտության հնագույն կոթողներից է: Միաժամանակ այն իր տեսակի մեջ առավել վաղ նմուշներից մեկն է համամարդկային երգարվեստում:

1 В. Дж. Конен, Значение внеевропейских культур для профессиональных композиторов XX века («Советская музыка», 1971, № 10, с. 51.).

2 Արմեն Քահ. Թորոսյան, Աստվածային պատարագամատուց կամ խորհրդատեսոր սըրբազն պատարագի, Նյու-Յորք, 1933, Սպ. Մելիքյան, Մակար Եկմայակի դերը և տեղը հայ երաժշտության պատմության մեջ, («Էջմիածին» 1977, № 7, էջ 33—39), Մ. Մորաբյան, «Հայկական պատարագը և նրա մշակումները» («Հայկական արվեստ, ժողովածու, Երևան, 1984, № 2, էջ 149—164) և այլն:

3 «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Երևան, 1980, հ. 4, էջ 168:

Հայոց Պատարագը ծնունդ է առել IV դարի վերջում, երբ Հայաստանում քրիստոնեության հաստատման և հայոց գրերի գյուտի շնորհիվ իր ձևավորման առաջին փուլն էր թեակոխում հայ հոգևոր երգաստեղությունը, ազգային երաժշտական մշակույթի մասնագիտացված ճյուղը, որը փոխարինեց հեթանոսական տաճարի երաժշտությանը<sup>4</sup>: Իր ստեղծման ժամանակից Պատարագը, ինչպես և ողջ հայ հոգևոր երաժշտությունը<sup>5</sup>, անցել է զարգացման երկարատև ճանապարհ, որի մի քանի ոլորտները ներկայացնում ենք ստորև: Այդ զարգացման գլխավոր ուղղվածությունն էր Պատարագի ակներև «հայացումը», քանի որ Պատարագը ներմուծվել էր Հայաստան հովն և ասորի կրոնավորների կողմից: Պատարագի «հայացման» միտումն իրավանացվում էր ժողովրդական ծագման սաղմուների օգտագործման, հայկական ութ ձայնի վրա հիմնված, ինչպես նաև ժողովրդական և գուսանական երաժշտության տարրերով հագեցած յուրօրինակ հոգևոր երգերի ստեղծման և այլ ճանապարհներով<sup>6</sup>: Ժամանակի ընթացքում զգալիորեն մեծացավ Պատարագի ծագալը՝ ի հաջիվ նոր հոգևոր երգերի ներառման և նոր մասերի ձևավորման: Զևափոխվեց և նրա մեղեդիական ոճը: Հնում առկա էր սիլաբիկ՝ սաղմուների մեղեդիական ոճը, որը հիմնված է վանկ-հնչյուն հարաբերության վրա<sup>7</sup>:

Երաժշտական բաղադրամասի խորացման շնորհիվ Պատարագի հոգեվոր երգերում հետպիտե գոյանում ու զարգանում են խմբերգային և մենակատարման երգեցողության ավելի երգային ձևեր<sup>8</sup>, որոնցում աստիճանաբար կազմակերպվում է մելիկմատիկ (զարդինչյունային) մեղեդիական ոճը:

Պատարագի զարգացման առավել կարևոր փուկերը կապված են հայոց երեք կաթողիկոսների՝ Ներսես Մեծի (IV դար), Հովհան Մանդակունու (V դար) և Ներսես Շնորհալու (XII դար) անվան հետ<sup>9</sup>: Հատկապես մեծ դեր խաղաց Ներսես Շնորհալին: Շնորհիվ նրա բեղմնավոր բարենորոգչական գործունեության, Հայոց Պատարագը հասավ գեղարվեստական կատարելության և մտավ համաշխարհային մնոնդիկ երգարվեստի լավագույն և մուշների շարքը: Շնորհալու գործունեության հետ են կապված, մասնավորապես, տաղի ներմուծումը Պատարագի մեջ<sup>10</sup>, ինչպես նաև հայ աշխարհիկ երաժշտության տարրերի (ոիթմերի) լայն և համարձակ օգտագործումը հոգևոր երգերում, որ լիարյուն «երկրային» հնչողություն հաղորդեց Պատարագին<sup>11</sup>:

Պատարագի գրառումը սկզբնապես կատարվել է խավային համակարգի միջոցով: Վերջինիս կորստի հետևանքով Պատարագը որոշ ժամանակ բանավոր կերպով էր փոխանցվում սերնդից-սերունդ: XIX դարում, շնորհիվ հայ-

<sup>4</sup> Ա. Թահմիկյան, Քննական տեսություն հայոց հին և միջնադարական երաժշտության (<ՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 1, էջ 44, 46):

<sup>5</sup> Հարկ է նշել, որ Պատարագում հայ մնոնդիկ (միջաձև) մասնագիտացված երաժշտության ամենամեծ և նշանակալից երկում ավելին, քան այլուր ընդհանրացել և արտահայտվել են հայ հոգևոր երգարվեստի առավել ընտրող առանձնահատկությունները և զարգացման կարևորագույն միտումները: Այդ պատճառով մեր ասածը Պատարագի մասին հավասարապես վերաբերում է նաև հայ հոգևոր երաժշտությանը ընդհանուր առմամբ:

<sup>6</sup> A. Шавердян, Очерки по истории армянской музыки XIX—XX веков, М., 1959, с. 32. 7. Թահմիկյան, նշվ. հորդ., էջ 46, 47:

<sup>7</sup> Ю. Евдокимова, История полифонии. Многоголосие средневековых X—XIV века, М., 1983, с. 13.

<sup>8</sup> Н. Тагмизян, Музыкальная энциклопедия, т. 4, с. 205.

<sup>9</sup> Արմեն քահ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 28:

<sup>10</sup> Ա. Թահմիկյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժշտ, Երևան, 1973, էջ 41:

<sup>11</sup> Ա. Թահմիկյան, Ներսես Շնորհալին..., էջ 44:

կական նոտագրության (Լիմոնջանի սիստեմի)<sup>12</sup> ստեղծման և հայերի շրջանում եվրոպական նոտագրության տարածման, վերականգնվեց հայ երաժշտության նմուշների գրառման հնագույն ավանդույթը: Որպես հետևանք, ի թիվս այլոց, նորից գրառվեց Պատարագը, այս անգամ հայկական նոտագրության միջոցով՝ Լիմոնջանի աշակերտների և հետնորդների, կոստանդնուպոլսեցի երաժիշտներ Արխատակես Հովհաննիսյանի, Գաբրիել Երանյանի, Եղիա Տընտեսյանի և ուրիշների կողմից: Դրա հետ մեկտեղ Պատարագը գրառվեց նաև եվրոպական նոտագրությամբ Վիեննայում, Վենետիկում (միմիթարյանների շանքերով), Կալկաթայում և այլուր<sup>13</sup>:

Պատարագի երաժշտական բովանդակության ուսումնասիրության նպատակով նրա՝ այժմ գյուղուն ունեցող ընթեռնելի խմբագրություններից որպես սկզբնաղյուր նախընտրեցինք Նիկողայոս Թաշչյանի գրառումը (հայկական նոտաներով): Այս գրառումը կատարվել է; անցյալ դարավերջին: Թաշչյանի Պատարագը նաև նորին աղյուսների՝ այսինքն Պատարագի XIX դարում գրառված տարբերակների մեջ, առանձնանկում է իր նյութերի առավել լիարժեքությամբ և ոճական մաքրությամբ<sup>14</sup>: Նիկողայոս Թաշչյանը, որ կոստանդնուպոլսեցի երաժիշտ էր, Լիմոնջանի աշակերտի աշակերտը, Պատարագը գրառել և հրատարակման է նախապատրաստել Վաղարշապատրում<sup>15</sup>: Թաշչյանի գրառմամբ «Երգեցողութիւնք սրբոյ Պատարագի» լույս են տեսել երկու անգամ՝ 1874 և 1878 թվականներին: Մեր հետազոտման առարկան վերջին հրատարակությունն է:

Թաշչյանի «Երգեցողութիւնք սրբոյ Պատարագի» մեջ գետեղված են Պատարագի չորս տարբերակներ, որոնք նախատեսված են հայ եկեղեցական օրացույցի որոշակի օրերին կատարվելու համար: Այդ տարբերակներն են «Վասն Կիւրակէից և այլոց հանդիսաւոր աւուրց», «Վասն լուր աւուրց», «Վասն Տաղաւարաց» և «Վասն Մեծի Պահոց», որոնց բնագրերն ու ծավալը լրիդանուր առմամբ համընկնում են<sup>16</sup>:

Այդ տարբերակների ինքնուրույնությունը, որ կանխորոշված է եկեղեցական օրացույցով, բխում է գրական նույն բնագրի երաժշտական տարբեր մարմնավորման սկզբունքից: Վերջինս հայ հոգևոր երաժշտության՝ դարերի խորքից մեզ հասած ավանդական առանձնահատկություններից է<sup>17</sup>: Դրա հետևանքով՝ առաջացած նույն հոգևոր երգի մեղեդիական զանազան տարբերակները մեծ մասամբ ներկայանում են իրենց ուրույն բնույթով, ինտոնացիոն բովանդակությամբ, մեղեդիական ոճով և այլն: Համեմատենք «Խորիուրդ խորին» երկու տարբերակները<sup>18</sup>:

<sup>12</sup> Լիմոնջանի սիստեմ այսպես է կոչվում հայկական նոտագրությունը նրա ստեղծողի՝ կոստանդնուպոլսեցի երաժիշտ Համբարձում Լիմոնջանի անվամբ:

<sup>13</sup> Մ. Մուրադյան, Աշվ. հոդվ., էջ 152—153:

<sup>14</sup> Հ. Տագմազյան, Թեօրիա մյուսն Տրեւել Արմենիա, Երևան, 1977, ս. 8.

<sup>15</sup> Պատարագի հետ միաժամանակ Թաշչյանը Վաղարշապատում գրանցեց նաև (նույն պահ Լիմոնջանի սիստեմով) հայ երաժշտության երկու կարևորագույն ժողովածուներ՝ «Ծարակնոցը» և «Ժամագիրքը», որոնք լույս տեսան համապատասխանութեն 1875 և 1877 թվականներին:

<sup>16</sup> Բացառություն են կազմում. «Սուրբ Աստուած»-ի և «Տէր ողորմեա»-ի բնագրերի որոշ անհամապատասխանությունը Պատարագի զանազան տարբերակներում, ինչպես նաև «Խորի խորին»-ի և «Քարեխօսութեամբ»-ի բացակայությունը՝ Դ տարբերակում:

<sup>17</sup> Ն. Թահիբյան, Ներսես Ըստրիակինն, էջ 77:

<sup>18</sup> «Ողվածում ներկայացված բոլոր երաժշտական օրինակները հայկական նոտագրությունից ելքովականի են փոխարիմ Երևանի Կոմիտասի անվան կոմիտագույն տեսական-կոմպուտուրական բաժնի ուսանողները՝ հորիւմ ինդիսակի ինդիսակարտագույն:

*Andante*

Խորիորդ խորին /վասն լոր աւորց/  
 խոր - հորդ խո - րին ան - հաս ա - - նըս - կիպըն

*Adagio* Խորիորդ խորին /վասն կիւրակէից/  
 խոր - հորդ խո - - րին ան - հաս ա -  
 նը - ս - կիպըն

Առաջինը խստաշունչ է: Ունի պարզ և անպաճույք երաժշտական լեզու: Երկրորդ տարբերակը քնարական բնույթի է: Այն հիմնված է երգեցողության լայնաշունչ կանտիենային եղանակի վրա: Նշենք նաև «Սուրբ Տէր զօրութեանց», «Միայն սուրբ», «Օրինութիւն» և այլ հոգևոր երգերի տարբերակները<sup>19</sup>: Ենելով այս հանգամանքից, կարծում ենք, որ թաշչյանի գրառած Հայոց

*Andante non troppo*

Ասոր Ասպոսած  
 Ասոր Ասպ-ոսան սորբ եւ կը - կոր սորբ ե - լ  
 ա - մահ որ յար-եարի մե - ռե - լոյ ո -  
 ղոր - մեա մեկ

*Adagio*

Ասոր Ասպոսած  
 Աս - - - բ Ա - սպ - ոս -  
 Տ, սորբ ե - - - կը - կոր

<sup>19</sup> Դրա հետ մեկտեղ նշենք նույն հոգևոր երգի մեղեղիական տեսակետից մոտ տարբերակների գոյությունը, օրինակ՝ «Բարեխօսութեամբը» Պատարագի I և II տարբերակներում: Որոշ հոգևոր երգեր՝ «Սուրբ Աստուածը», «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», մեղեղիական անփոփոխ կամ աննշան փոփոխված ձևով են հանդես գալիս Պատարագի բոլոր տարբերակներում:

Պատարագի չորս տարբերակները, հենվելով գրական նույն հիմքի վրա, մեղեդիական տեսակետից ներկայանում են որպես հոգևոր երգերի ինքնուրուց շարքեր: Ավելացնենք նաև, որ մի շարք հոգևոր երգեր մեղեդիական այլայլ հանդերձներ ունեն ոչ միայն Պատարագի զանազան տարբերակներում, այլև մեկի սահմաններում: Օրինակ՝ առաջին տարբերակի «Սուրբ Աստուածը»:

Նույն տարբերակի «Տէր ողորմեան» և այլն:

Հայոց Պատարագի ծեսը բազմամասն է<sup>20</sup>: Համապատասխանորեն բազմամասն է և նրա երաժշտական կառուցվածքը<sup>21</sup>:

1. Խորհուրդ խորին
2. Բարեխօսութեամբ
3. Սուրբ Աստուած
4. Սուրբ սուրբ
5. Հայր մեր
6. Միայն սուրբ
7. Օրինութիւն
8. Քրիստոս պատարագեալ
9. Լցաք, Գոհանամբ

Պատարագի մասերի կառուցվածքային հիմքը բաղկացած է երկու միավորներից: Առաջինը ծավալուն հոգևոր երգերն են՝ «Գոհասամքը», «Հայր մերը», «Քրիստոս ի մեջ մեր յայտնեցաւ», «Բարեխօսութեամբ», «Լցաք», «Յայս յարկ» և այլն: Երկրորդը՝ մեղեդիական ոչ մեծ ֆրազներն ու նախադասություններն են, որոնց դերը Պատարագում կայանում է կրոնական տարբեր բացականչությունների երաժշտական մարմնավորման մեջ. «Ակելուիա», «Ամէն», «Օրինեա Տէր», «Ողորմեա Տէր», «Յիշեա Տէր», «Կէցո Տէր», «Պուխումէ» և այլն: Պատարագի նշված կառուցվածքային միավորները սովորաբար իրար կից են հանդես գալիս մեկ մասի սահմաններում: Դրա հետ մեկտեղ Պատարագի առաջին մասը՝ «Խորհուրդ խորինը», ամբողջապես բաղկացած է հոգևոր երգից: Նշենք նաև միայն մեղեդիական բացականչություններից կազմված բաժնի<sup>22</sup> գոյությունը Պատարագում: Այն գտնվում է «Սուրբ Տէր զօրութեանց» և «Հայր մեր» մասերի միջև:

Պատարագի երաժշտական կառուցվածքում հիմնական տեղը գրավում են անշարժ, Պատարագի բոլոր տարբերակների համար «պարտադիր» մասերը: Դրանց հակառակ, Պատարագի շարժական մասերը, որոնց թվին են պատկանում «Խորհուրդ խորինը», «Բարեխօսութեամբը», մտնում են միայն եկեղեցական որոշ տոնների ժամերգության մեջ<sup>23</sup>: Հոգևոր երգերի և մեղեդիական

<sup>20</sup> Սպ. Մելիքյան. նշվ. հոդվ.:

<sup>21</sup> Պատարագի այս կամ այն հատվածը մաս ենք համարում, նրանում հոգևոր երգի Պատարագում զարգափառական կերպարային բովանդակության զիսավոր արտահայտչի առկայության դեպքում: Պատարագի մասերն անվանելիս օգտագործել ենք տվյալ մասերի երգին սկզբնական բառերն ու բառակապահցությունները:

<sup>22</sup> Պատարագի այն հատվածը, ուր բացակայում է հոգևոր երգը, ի տարբերություն մասի, անվանում ենք բաժնի:

<sup>23</sup> Պատարագի անշարժ և շարժական մասերի վերաբերյալ տե՛ս. Ն. Թահմիպան, Ներսես Ծնորհակին..., էջ 40: Պատարագի շարժական մասերից նշենք նաև Ա տարբերակում «Խորհուրդ խորին»-ին նախորդող «Ողորմեա ինձ Աստուածը» և «Օրինեմք զքեսը», որոնց շնորհիվ Պատարագի տվյալ տարբերակն ունի 11 մաս: Դրա հետ մեկտեղ Դ տարբերակում մասերը հինգն են, որովհետոն այստեղ, ինչպես նշվեց, բացակայում են առաջին երկու մասերը («Խորհուրդ խորին» և «Բարեխօսութեամբ») և միաժամանակ մեկ մասի են համախըմբվում «Միայն սուրբն» ու «Օրինութիւնը» և «Քրիստոս պատարագեալն» ու «Լցաք, Գո-

բացականչությունների համախմբումը ինքնուրույն մասերի, ուեղի է ունենում նրանց լադա-ինտոնացիոն բովանդակության ընդհանրության հիման վրա: Տվյալ առումով հատկապես նշենք հոգևոր երգերի և մեղեղիական բացականչությունների կադանսային կառուցվածքները, որոնք Պատարագի յուրաքանչյուր մասի ներքո «գործում են» որպես լեյտմուտիվներ և միաժամանակ հանդես գալիս տվյալ մասերի յուրօրինակ երաժշտական խորհրդանշանների նշանակությամբ: Ստորև ներկայացնում ենք կադանսային կառուցվածքների մի քանի օրինակներ<sup>24</sup>:

*”Ուրբ սորբ” մասի կադանսային կառուցվածքները*

*”Հայր մեր” մասի կադանսային կառուցվածքները*

*/ կունկայի ոլորկը /*

*/ օժանդակ հենակերի ոլորկը /*

Պատարագի յուրաքանչյուր մաս ունի իր ինքնուրույն կերպարային-հուզական և լադա-ինտոնացիոն նկարագիրը: Վերջինիս գլխավոր կրողը հանդիսանում է հոգևոր երգը: Որոշ մասեր մեկական երգ են պարունակում: Մյուսների հիմքը կազմում են երգերի խմբեր: Երրորդ մասում այսպիսի խումբը ներկայացված է «Սուրբ Աստուած», «Մի ոք յերախայից», «Մարմին Տէրունական», «Սաղմոն ասացէք» երգերով, չորրորդում «Սուրբ Տէր զօրութեանց», «Հայր երկնաւոր», «Յամենայնի», «Որդի Աստուծոյ», «Հոգի Աստուծոյ» երգերով և այլն:

Հոգևոր երգերը շրջապատված են «արբանյակներով»—մեղեղիական բացականչություններով, որոնք երգերի նկատմամբ գործում են որպես նախանվագներ (պրեսուտիա), կապեր (ինտերվուտիա) և վերջանվագներ (պոստիա): Այդայիսին են «Սուրբ Աստուած» երգին նախորդող մեղեղիական բացականչությունները (I, 14)<sup>25</sup>:

հանամքը: Այդ պատճառով Պատարագի Ա և Դ տարրերակների մասերի համարակարումը տարբերվում է վերը ներկայացված ցանկի համարակարումից: Տվյալ ցանկը կազմել ենք Պատարագի Բ և Գ տարրերակների հիման վրա և այն համարում ենք առավել ընդհանրացված:

<sup>24</sup> Կադանսային կառուցվածքները Պատարագի այս կամ այն մասում որոշ դեպքերում մեղեղիական տեսակետից համընկնում են, իսկ ավելի հաճախ իրար մոտ մեղեղիական տարբերակներ են հանդիսանում:

<sup>25</sup> «Հայր մեր» մասում կադանսային կառուցվածքները երկուս են. նրանցից մեկը հաստատում է տերցիային հիմք ունեցող և բարիտոնական լադի նիկական ոլորտը, մյուսը նույն լադի օժանդակ հենակետի ոլորտը:

<sup>26</sup> Այրութենով նշում ենք Պատարագի տարրերակը, արաբական թվերով՝ հրատարակության էջը:

Մեղեղիական բացականչոյններ - սկսվածիներ

1) *Adagio*

Պո - - - ս - իս - - մէ

2) *Andante*

Եւ ընդ ին - գ - լո - յդ ժում

3) *Adagio*

Օրի - նտա Տէ - ր

Սուրբ Աստրուած

Սուրբ Աստ - ռած սորբե իր - կը սուրբ

Կուրյանը կրես նորացին պրիմանդ 8.

Դրանք կազմում են տվյալ երգի սկսվածքների շղթա: Սկսվածքների ավելի երկար շարք է նախորդում «Հայր մեր» երգին (Ա, 30—32): Նույն երգի լադային կառուցվածքի օկտավայնությունը Պատարագի Բ տարրերակում նախապես «գուշակվում» է «Կեցո Տէր և ողորմեա» մեղեղիական բացականչությամբ (64): Ա տարրերակի «Սուրբ սուրբ» մասի եպրափուկիչ «Հոգի Աստուծոյ» երգում տեղի ունեցող շեղումը տվյալ մասին գլխավոր լադից՝ F մաժորից դեպի մեծացրած սեկունդայով C լադը նույնպես նախապատրաստվում է երգին նախորդող մեղեղիական բացականչությամբ («Օրինեա Տէր», I, 23): Մյուս օրինակներն են. «Օրինեալ է Աստուած» մեղեղիական բացականչությունը՝ «Քրիստոս պատարագեալի» սկսվածքը (Ա, 44), նույնը՝ տվյալ երգի մեկայլ տարրերակում (Ա, 45) և այլն:

Հայր մէր

*Modestos*

Հայր մէր որ յէր - կիս ես սուրբ ե - ղի - պի ա - նոն ին

Մեղեղիական բացականչությունները որպես կապեր հանդես են գալիս Պատարագի այն մասերում, որոնք պարունակում են մի խումբ երգեր: Կապերի դերը կայանում է մեկ մասի սահմաններում տարրեր երգերի միջև լադաինստոնացիոն կամրջի ստեղծնան մեջ: Որպես օրինակ նշենք «Օրինեա Տէր» և «Ամէն» բացականչություն-կապերը, որոնք միացնում են Պատարագի Ա տարրերակի Զ մասի «Սուրբ Տէր զօրութեանց» և «Ամէն: Հայր երկնաւոր», երգերը (21): Նշենք նաև Պատարագի մասերում առկա մեղեղիական բացականչություն-վերջանվագները, որոնք հաջորդում են երգին: Օրինակ՝ «Բա-

թեխնօսութեամբ»-ին (Ա, 13), «Հոգի Աստուծոյ»-ին (86) և այլն և առնվազում այս երգերի լադա-ինտոնացիոն բովանդակությունը: Երբեմն երգին հաջորդում է վերջնանվագների մի ամբողջ շարք, որն ամփոփում է ոչ միայն տվյալ երգը, այլև Պատարագի այս կամ այն մասը: Օրինակ՝ «Լցաք, Գոհանամք» մասի վերջնանվագները (Ա, 48—50): Ավելացնենք նաև, որ մեղեղիական բացականչությունների նշված գործառնությունները հաճախ հանդես են գալիս միաժամանակ: Այսպես՝ «Օրինեա Տէր», «Եւ ընդ հոգուոյ քում», «Աստուծոյ երկրպագեսցուք» (Բ, 62) մեղեղիական բացականչությունները ներկայանում են և՛ որպես վերջնանվագներ «Յամենայն» երգի նկատմամբ, և՛ որպես կայեր «Յամենայն»-ի, և՛ նրան հաջորդող «Որդի Աստուծոյ»-ի միջև, և՛ որպես նախանվագ «Որդի Աստուծոյ»-ի համար:

Բազմապահի է Պատարագի լադային հիմքը: Այն գլխավրրապես կազմում են մոնոտոնիկալ լադերը: Վերջինների թվում ամենից շատ հանդիպում են մեծացրած սեկունդայով լադային համակարգերը և հատկապես C տոնիկայով և վերևի բարձր մեղիանտայով լադը<sup>27</sup>: Օրինակներ՝ «Սուրբ Աստուծը» բոլոր տարբերակներում, «Հայր մերը» Դ տարբերակում, «Միայն սուրբ» Ա և Բ տարբերակներում: Տվյալ լադի հնչյունաշարն է.

$$\begin{matrix} \text{f}^1 - g^1 - a^1 - b^1 - \boxed{c^1} - des^2 - e^2 - f^2 - g^2 \end{matrix}$$

Նշենք նաև, առաջինին համանման, նույն բարձրության վրա գտնվող, մեծացրած սեկունդայով ևս երկու լադեր. տերցիային հիմք ունեցող և իջեցրած Դ աստիճանով պատճենագիր ափոյուգիականը Ա տարբերակի «Քոհստոս պատարագեալ»-ում, որի հնչյունաշարն է.

$$gis^1 - \boxed{a^1} - b^1 - \boxed{c^1} - des^2 - e^2 - f^2 - g^2$$

Կվարտային հիմք ունեցող, իջեցրած Ե աստիճանով ց էլոլականը առաջին տարբերակի «Օրինութիւն»-ում: <Նշյունաշարն է<sup>28</sup>.

$$\begin{matrix} \text{f}^1 - \boxed{g^1} - a^1 - b^1 - \boxed{c^1} - des^2 - e^2 - f^2 - g^2 \end{matrix}$$

Մեծացրած սեկունդայով հաջորդ լադն ունի G տոնիկա: Օրինակներ՝ Դ տարբերակի «Միայն սուրբ»; «Օրինութիւն» և այլն: Լադի հնչյունաշարն է.

$$d^1 - e^1 - f^1 - \boxed{c^1} - as^1 - h^1 - \boxed{e^1} - d^2 - e^2 - f^2$$

<sup>27</sup> Ըստ լադի թեքման, նրա տոնիկական հնչյունը նշում ենք մեծատառով (մաժորի դեպքում) կամ փոքրատառով (մինորի դեպքում): Դրա հետ մեկտեղ տոնիկան եկորագծում ենք քառակուսիով, օգնանակ հենակետը՝ շրջանով:

<sup>28</sup> Մեծացրած սեկունդայով նշված լադային երեք համակարգերը մոնում են արևելյան մոնողիկ երաժշտության մեջ լայնորեն տարածված և Պատարագի համար առավել ըստոց «Խոսրովային» ձայնեղանակի կազմի մեջ, Ն. Թահմիպյան, Ներսես Ընորհային..., էջ 24—25:

Նույնքան հաճախակի Պատարագում հանդիպում է տերցիալին հիմք ունեցող և ցածր Դ աստիճանով ց եղական լադը: Օրինակներ՝ «Բարեխօսութեամբ»՝ բոլոր տարբերակներում, մեղեղիական բացականչւթյունների բաժնը՝ «Սուրբ սուրբ» և «Հայր մեր» մասերի միջև, նույնպես բոլոր տարբերակներում: «Նշյունաշարն է.

$$d^1 - e^1 - f^1 - \boxed{g^1} - a^1 - \boxed{b^1} - c^2 - d^2 - \boxed{e^2}$$

Եղական խմբի լադերից նշենք նաև տերցիալին հիմք ունեցող, բնական Դ աստիճանով և ներքեմի բարձր մեղիանտայով ց-ն, Բ և Դ տարբերակների «Քրիստոս պատարագեալ»-ում.

$$e^1 - f^1 - \boxed{g^1} - a^1 - \boxed{b^1} - c^2$$

Կվարտային հիմք ունեցող ց-ն, բոլոր տարբերակների «Խորհուրդ խորին»-ում, Գ «Միայն սուրբ»-ում, Բ «Օրինութիւն»-ում.

$$f^1 - / \boxed{g^1} - a^1 - b^1 - \boxed{c^2} - d^2$$

Կվինտային հիմք ունեցող ց-ն, Բ տարբերակի «Օրինութիւն» մասում և այլն.

$$\boxed{f^1} - \boxed{g^1} - a^1 - b^1 - c^2 - \boxed{d^2} - e^2 - \boxed{f^2} - \boxed{g^2}$$

Եղական լադերի հետ մեկտեղ Պատարագի մինտրային լադային համակարգերի խմբի մեջ է մտնում նաև տերցիալին հիմք ունեցող և փոփոխակվող Ե և Բ աստիճաններով և լոկրիականը Ա ու Գ տարբերակների «Հայր մեր»-ում: Լադի հնչյունաշարն է.

$$c^1 - d^1 - / \boxed{a^1} / \boxed{e^1} - \boxed{f^1} - / \boxed{g^1} / \boxed{b^1} - \boxed{a^1} - \boxed{b^1} - \boxed{c^1},$$

Մինորների հետ միասին Պատարագի լադային դիմագիծը կազմում են և մաժորային լադերը, մասնավորապես F իոնականը տերցիալին հիմքով Բ և Դ տարբերակների «Սուրբ սուրբ»-ում<sup>29</sup>:

$$c^1 - d^1 - e^1 - \boxed{F^1} - \boxed{g^1} - / \boxed{a^1} / \boxed{b^1} - \boxed{c^1} - \boxed{d^1}$$

Պատարագի Ա տարբերակի երկրորդ մասում («Օրինեմք ըպքես Հայր») տվյալ լադը երրորդ աստիճանի փոփոխակման շնորհիվ հանդես է գալիս որ-

<sup>29</sup> ցis-ը տվյալ լադում հանդես է գալիս որպես օժանդակ հենակետի նկատմամբ ներպածական հնչյուն:

Մասերի անվանումը	Ա տարբերակ	Բ տարբերակ	Գ տարբերակ	Դ տարբերակ	Ե տարբերակ
1. Խորհուրդ խորին 2. Բարեհօսպեհասք 3. Սուրբ Աստուած 4. Սուրբ տպար	Տ էռլ. 4 Տ էռլ. 3 Ը հեմիող <sup>30</sup> (բ—զ) F իռև. 5	Տ էռլ. 4 Տ էռլ. 3 Ը հեմիող (բ—զ) F իռև. 3	Տ էռլ. 4 Տ էռլ. 3 Ը հեմիող (բ—զ) F իռև. 5	Տ էռլ. 4 Տ էռլ. 3 Ը հեմիող (բ—զ) F իռև. 3	Տ էռլ. 4 Տ էռլ. 3 Ը հեմիող (բ—զ)
ա. Ամէն և ընտ հոգուող քում <sup>31</sup>	Տ էռլ. 3	Տ էռլ. 3	Տ էռլ. 3	Տ էռլ. 3	Տ էռլ. 3
5. Հայր մեր	Ե լոկ. 3	Ե լոկ. (օկտավային)	Ե լոկ. 3	Ե լոկ. 3	Ե լոկ. (բ—զ)
6. Միայն սուրբ	Ը հեմիող (բ—զ)	Ը հեմիող (բ—զ)	Տ էռլ. 4	Տ էռլ. 4	Ը հեմիող (բ—զ)
7. Օրինակթիւն <sup>32</sup>	1) Տ էռլ. 4—5— հեմիող (ն—զ) 2) Տ էռլ. 5 3) Ը հեմիող (բ—զ) 4) Տ էռլ. 4,6	1) Տ էռլ. 4—5— հեմիող (ն—զ) 2) Տ էռլ. 5 3) Ը հեմիող (բ—զ) 4) Տ էռլ. 4,6	Տ էռլ. 4 Տ էռլ. 4	Տ էռլ. 4 Տ էռլ. 4	Տ էռլ. 4 Տ էռլ. 4
8. Քդիստո պատարագեալ	1) Յ լոկ. 3—4— հեմիող (ի—է)	Տ էռլ. 4	Տ էռլ. 4	Տ էռլ. 4	Տ էռլ. 4
9. Լցաք, Գոհանամաք	Ե Տ իռև. (օկտավային)	Ե Տ իռև. (օկտավային)	Ե Տ իռև. (օկտավային)	Ե Տ իռև. (օկտավային)	Ե Տ իռև. (օկտավային)

<sup>30</sup> «Տեմիոլ կոչվում են այն լաբրը, որովք պարուսակում են մեծացրած սկզբունք: «Տեմիոլ լաբրի լիստում, լարի նշանակում կոչվել, փակագիրով հողմանական թվելով» Ներկայացնում ենք այն աստիճանները, որոնց վիճը տվալ դնալում գովազնում է մեծացրած սկզբունք:

<sup>31</sup> Բաժինն, ի տարբերություն սահմանի, նշանա կում ենք տառով:

<sup>32</sup> «Օրինակթիւն» մասն այս դեսպում ունի չորս տարբերակ: Նրան հաջորդող «Քդիստո պատարագաւու» երկու:

պես մաժորամինոր: Նշենք նաև կրինտային հիմք ունեցող F մաժորափն լադը Ա և Գ տարբերակների «Սուրբ սուրբ»-ում.

$$c^1 - d^1 - e^1 - [F^1] - g^1 - a^1 - b^1 - (c^1) - d^1 - e^1$$

Պատարագի լադային համակարգերում մոնոտոնիկալ լադերի կողքին հանդիպում են օկտավային կառուցվածքի լադեր: Դրանք են՝ Es լիդիական-իոնականը Պատարագի Ա և F տարբերակների «Լցաք, Գոհանամք» մասի մեղեդիական բացականչություններում, ինչպես նաև ը լոկրիականը Բ տարբերակի «Հայր մեր»-ում: Պատարագի չորս տարբերակների լադային կառուցվածքի քննությունը հանգեցնում է այն եղակացության, որ գրական նույն ընագիրը Պատարագի վանական տարբերակներում ստանում է լադային նույն ձևակերպումը: Այսինքն՝ գրական որոշակի բռվանդակության երաժշտական մարմնավորումը Պատարագում կապվում է որոշակի լադի հետ: Ներկայացնում ենք Պատարագի լադային կառուցվածքի աղյուսակը (Տես էջ 34):

Այս սխեման բացահայտում է Պատարագի լադային ծավալման սկզբունքը: Վերջինս կայանում է տարբեր թեքման՝ մինորային, ենթող և մաժորային լադերի հաջորդականության մեջ:

Մեղեդիական ոճը, որն ինչպես հայտնի է, բնորոշվում է եղանակի ութմիկ և ինտոնացիոն բարդության աստիճանով և եղանակի ու գրական խոսքի հարաբերակցության սկզբունքով<sup>33</sup>, Պատարագում կազմված է հինգ տարատեսակներից: Դա սիլարիկ մեղեդիական ոճն է<sup>34</sup>: Սիլարիկ հոգևոր երգերի օրինակներն են բոլոր տարբերակների «Սուրբ Աստուածը», «Ողջոյն տուք», «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», «Հայր մերը», Ա և Դ տարբերակների «Մարմին Տէրունականը», Դ տարբերակի «Յամենայնին», «Քրիստոս Պատարագեալը», «Գոհանամքը»:

*Allegro*

Բարեխօսութեամբ

Դա և նևմատիկ մեղեդիական ոճն է, որի ժամանակ վանկին համապատասխանում է ինտոնացիոն պտույտ՝ երկու-չորս հնչյուններից բաղկացած խումբ<sup>35</sup>: Օրինակներն են առաջին երեք տարբերակների «Էպրեխօսութեամբը», բոլոր տարբերակների «Ամեն: Հայր երկնաւորը», «Որդի Աստուծոն», «Հոգի Աստուծոն», Ա, Բ և Գ տարբերակների «Յամենայնին» և այլն:

<sup>33</sup> Ю. Евдокимова, նշվ. աշխ., էջ 13:

<sup>34</sup> Սիլարիկ մեղեդիական ոճի համարում բնորոշումը տե՛ս սույն հոդվածի 26-րդ էջում:

<sup>35</sup> К. Пэрриш, Дж. Оул, Образцы музыкальных форм от григорианского хорала до Баха, Л., 1975, с. 9,

*Adagio*

Յայս լարկ

Նշենք նաև Պատարագում առկա մելխիպմատիկ հոգևոր երգերը, որտեղ վանկերը երգվում են ծավալուն մեղեղիական ֆրազներով, և սրոնց մեջ առավել վառ կերպով է դրսնորկել կատարողական ոգին հայ մասնագիտացված մոնողիկ երաժշտության ասպարեզում: Օրինակներն են Բ տարբերակի «Յայս յարկը», Ա, Բ և Գ տարբերակների «Ամէն: <այր սուրբը»:

Դիառք ինկ Տէր Ասկուած մէր

Մեղեղիական ոճի նշլած տարատեսակները հավասարապես բնորոշ են Պատարագի ոչ միայն երգերին, այլ նաև մեղեղիական բացականչություններին: Այսպես օրինակ սիլաբիկ բացականչություններից են. «Փառք քեզ Տէր Աստուած մեր» (Ա, 16), «Կեցո Տէր և ողորմեա», «Առաջի քո Տէր» (Բ, 58, 59), «Յիշեա Տէր և ողորմեա» (Բ, 63) և այլն:

*Moderato*

Եւ ընդ հոգւոյդ իսմ

Նևատիկ բացականչություններից. «Կեցո Տէր և ողորմեա» (Ա, 31), «Եւ ընդ հոգւոյդ քում» (Բ, 62) և այլն:

Օրինեա Տէր

Մելխիպմատիկ. «Օրինեա Տէր» բացականչությունների շարքը Ա տարբերակից (21, 23, 34, 37), «Տէր ողորմեան» և «Առաջի քո Տէրը» նույն տարբերակից և այլն:

ՎՄԵՆ: Հայր Երկնաւոր

Վ - - մեն: հա - յր ե - ռ -  
նա - ւոր որ զն - - բ դի - ր  
ին ե - պոր ի մահ վա - պն մեր  
և այլն

Հարկ է նշել, որ մի շարք դեպքերում նույն երգի կամ մեղեղիական բացականչության տարբերակները հանդես են գալիս մեղեղիական տարբեր ոճերի ներքո: Դրա օրինակներն են «Սուլր Աստուած» երգի տարբերակները, որոնք ներկայանում են սիլաբիկ և մելիքմատիկ ոճերում (Ա, 14), «Լցաք»-ի՝ նևմատիկ և սիլաբիկ ոճերում (Ա, 46, Դ, 191): Մեղեղիական բացականչությունների օրինակներն են. «Փառք քեզ Տէր Աստուած»-ի (Ա, 16) և «Պոսոխումե»-ի (Ա, 14, 16) սիլաբիկ ու մելիքմատիկ տարբերակները: Պատարագում տեղ են գտել նաև մեղեղիական ոճի բաղադրյալ ձևերը, որոնք գոյանում են վերը նշված պարզ ձևերի միացման արդյունքներով: Դրանք են՝ նևմոսիլաբիկ ոճը Ա տարբերակի «Խորհուրդ խորին»-ում, նևմո-մելիքմատիկը Գ տարբերակի «Մարմին տէրունական»-ում, բոլոր տարբերակների «Սուլր սուլր»-ում, Ա «Հոգի Աստուծոյ»-ում և «Գոհանամք»-ում:

Պատարագը շարադրված է մոնողիկ եղանակով: Կերչինիս հետ մեկտեղ Պատարագում հատվածաբար հանդիպում է նաև բազմաձայնությունը: Մասնավորապես երկձայն են Պատարագի Ա տարբերակի «Սուլր սուլր» մասի երգերից շատերը. «Սուլր Տէր զօրութեանց», «Ամէն: Հայր երկնաւոր», «Յամենայնի», «Որդի Աստուծոյ» (20—23):

Այս երկձայնությունն իր տեսակով հարում է հետերօֆոնիայի պարզագուն ձևերին: Երկձայն են նաև «Ամէն» (Ա, 21) և «Փառք քեզ Տէր Աստուած մեր» (Գ, 78) մեղեղիական բացականչությունները: Պատարագի Գ տարբերակի «Սուլր Տէր զօրութեանց» երգի վերջում (84) խմբերգային միաձայնությունը վերածվում է եռաձայնության:

Պատարագը նախատեսված է վոկալ ա կապելլա (առանց նվագակցության) կատարման համար: Կերչինս հանդես է գալիս երգեցողության տար-

<sup>36</sup> Ю. Евдокимова, նշվ. աշխ., էջ 15:

<sup>37</sup> Նույն տեղում:

բեր ձևերով՝ միայնակ (սոլո), խմբերգային (ունիսոն), երկու երգչախմբերի հաջորդականությամբ<sup>36</sup> (անտիֆոն), մենակատարի, կամ մենակատարների խմբի և երգչախմբի հաջորդականությամբ<sup>37</sup> (ուսապոնսորային). Նշենք, որ երգեցողության ձևերը Պատարագում մեծ մասամբ պայմանավորված են մոնողիաների մեղեդիական ոճով: Այսպես օրինակ, սիլաբիկ հոգևոր երգերն ու մեղեդիական բացականչությունները «հնչյունավորում են» երգչախումբը: Դրան հակառակ մեղիպմատիկ հատվածներն իրենց դժվարին ոդիքմո-ինսոնացիոն կառուցվածքով կատարվում են միայնակ:

Պատարագը՝ հայ մասնագիտացված երաժշտության կոթողային արտահայտությունը, պարունակում է հայ հոգևոր երգաստեղծության գործեք բոլոր, մեծ ու փոքր «կամերային» ժանրերը, ավետիսները, ալելուհաները, շարականները, մեղեդիները, տաղերը:

Պատարագի երգերի երաժշտական ձևերը բազմապիսի են: «Հատկապես մեծ տեղ է գրավում մեկմասանի կառուցվածքը: Այս կառուցվածքն ունեն Ա, Բ, Դ տարբերակների «Սուլր Աստուածը», «Մի ոք յերախայից», «Մարմին Տէրունականը», «Սաղմոս ասացէք», Ա տարբերակի «Ողջոյն տուքը», Դ «Օրինութիւնը»: Մեկմասանի որոշ երգերի հատուկ է քառյակային-վարիացիոն ձևի տարբերի առկայությունը, ինչպես, օրինակ, Ա տարբերակի «Յամենայնի», «Որդի Աստուծոյ» և այլն: Մի շարք մեկմասանի երգեր հանդես են գալիս նախարանով: Դա Գ տարբերակի «Ամէն: Հայր երկնաւորն ե», «Հոգի Աստուծոն»: Նշենք, որ մեկմասանի են նաև Պատարագի բոլոր մեղեդիական բացականչությունները: Պատարագում բազմիցս հանդիպում են քառյակային և քայլակային-վարիացիոն ձևերը, որոնք բնորոշ են ծավալուն Իրգերի համար: Քառյակային ձևով է ընդայնվում մամսավորապես Ա տարբերակի «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»-ը, քառյակային-վարիացիոն՝ Ա և Բ տարբերակների «Խորիուրդ խորին»-ը, «Բարեխօսութեամբը», բոլոր տարբերակների «Հայր մերն» ու «Քրիստոս պատարագեալը» և Բ տարբերակի «Յայս յարկը»:

Թաջյանի գրառած «Երգեցողութիւնք սրբոյ Պատարագի» երաժշտական հորինվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ «Հայոց Պատարագի տվյալ խմբագրությունը անսպառ նյութ է պարունակում հետապողիների համար: Դրա հետ մեկտեղ Պատարագը գեղարվեստական բարձր արժեք է ներկայացնում երգահանների և կատարողների համար: Պատահական չէ, որ այն հայ կոմպոզիտորական երաժշտության երկու կոթողների՝ Մակար Եկմաշանի և Կոմիտաս վարդապետի բազմաձայն Պատարագների մեղեդիական հիմքը հանդիսացավ:

